N. 5934

25/XI

# ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

# ՀԱՅՈՑ ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

# 1914 Թ. ՄԷՋ.

Нахичевань на-Дону
Пар. тип. С. Я. АВАКОВА

1915

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ
ՏՊ. Ս. Յ. ԱՒԱԳԵԱՆԻ

12824

13824

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ

# ՀԱՅՈՑ ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

## 1914 Թ. ՄԷՋ.

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ
ՏՊ. Ս. Յ. ԱՒԱԳԵԱՆԻ

1915

Нахичевань на-Дону
Пар. тип. С. Я. АВАКОВА

# ՀԱՇԻՒ

## Նոր-Նախիջեւանի Հայազգի Աղքատախնամ Եկեղեցական Հոգաբարձութեան 1914 թուի գործունէութեան.

Նոր-Նախիջեւանի Հայազգի Աղքատախնամ Եկեղեցական Հոգաբարձութիւնը, կնքելով իւր գոյութեան 25-րդ տարեշրջանը, պարտք է համարում՝ իւր կանոնադրութեան 9-րդ և 11-րդ յօդուածների համաձայն՝ անցեալ 1914 թուի իւր գործառնութեանց համառօտ տեղեկագիրն ու դրամական հաշիւների պատկերը տպագրութեամբ ի լոյս ընծայել:

Անցեալ 1914 թուին Աղքատախնամ Եկեղեցական Հոգաբարձութիւնս իւր տեսչութեան տակ գտնուած կալուածներից, դրամագլուխներից և հասոյթի այլ աղբիւրներից ունեցել է

## ՄՈՒՏՔ

հարիւր եօթը հազար վեց հարիւր քսաներեք ռուբլի 95 կոպ. (107,623.95), որ գոյացած է

1. Անշարժ կալուածներից—

| | | | |
|---|---|---|---|
| Վարձադրամ Վ. Ախչիեանի տան № 1 . . . . | 2550 | — | |
| » » » » № 2 . . . . | 4750 | — | |
| » «Աղքատաց» կրպակների . . . . | 3586 | — | |
| » Մ. Բաբաջանի կալուածքի . . . . | 3329 | 49 | |
| » Գ. Դօնիկեանի տան . . . . | 700 | — | |
| » Ղ. Լազարեանի » . . . . | 7000 | — | |
| » Մ. Մուրատխանեանի, Գ. Պօպովի և Մ. Բաբաջանի տան . | 51800 | — | |
| » Յ. Պօպովի կալուածքի . . . . | 153 | 33 | |
| » Լ. և Յ. Սախաւեանի տան . . . . | 59 | — | |
| » Մ. Բարասուլեանի » . . . . | 16590 | 31 | |
| » Մ. Բեյլէ-Շահինեանի կրպակի . . . . | 480 | — | |
| » Յ. Խաթրանեանի տան ներքնայարկի . . | 50 | — | 91048 13 |

2. Տագանրոգի փոխ. ապահովագր. ընկերութիւնից—

Յ. Պօղովի հրդեհուած կրպակների վնասին ի հատուցումն . . . . . . . . 4538 —

3. Տոկոսաբեր թղթերից—

| | | | |
|---|---|---|---|
| %% Լ. Բաթրեանի արժեթղթերի . . . . | 376 | 20 | |
| » Բ. Բալեանի » . . . . | 5 | — | |
| » Խ. Դիւաչքովի » . . . . | 3838 | — | |
| » Մ. Թուսուզեանի » . . . . | 38 | — | |
| » Մարգաս. Ընկերութ. » . . . . | 1142 | 85 | |
| » Մ. Մուրատխանեանի » . . . . | 4 | 75 | |
| » Յ. Պօղովի » . . . . | 142 | 50 | |
| » Ն. Սարիեանի » . . . . | 45 | 60 | |
| » Յ. Սախաւեանի » . . . . | 33 | 24 | |
| » Վարժապետական ֆոնդի . . . . | 19 | — | 5645 14 |

4. Մնայուն աւանդարաններից—

%% Ս. Նաթալեանի աւանդագրամի . . . 190 —

5. Ժամանակաւոր աւանդարաններից—

| | | | |
|---|---|---|---|
| %% Գ. Պօղովի դրամագլխի . . . . | 22 | 22 | |
| » Յ. Պօղովի » . . . . | 294 | 98 | |
| » Սելէջեան որբերի » . . . . | 9 | 50 | |
| » Քարածուխի » . . . . | 193 | 29 | 519 99 |

6. Ընթացական հաշիւներից—

| | | | |
|---|---|---|---|
| %% Ն.-Նախիջ. քաղ. դրամատնից . . . | 195 | 78 | |
| « » Փ. վարկի ընկ. . . . . | 4 | 75 | |
| » Ռոստով-Նախիջ. Փ. վարկի ընկ. . . . | 1 | 24 | 201 77 |

7. Ռոստովի տան վարձակալներից—

Կոյուղիի գործածութեան վարձ . . . . . 622 —

8. Ձեռնակերտնի դպրոց-արհեստանոցից—

| | | | |
|---|---|---|---|
| Կարուած կարերից . . . . . | 905 | 10 | |
| Արհեստանոցի օգտին նուէրներից . . . | 219 | — | 1124 10 |

9. Նուիրաբերութիւններից—

| | | | |
|---|---|---|---|
| Տօնշնորհաւորներից գանձուած . . . . | 744 | 50 | |
| Գանձանակագրամներից . . . . | 137 | 63 | |
| Այլ և այլ անձերից՝ աղքատաց օգտին . . | 207 | 50 | |



| | | | |
|---|---|---|---|
| Այլ և այլ անձերից՝ անկելանոցի օգտին . . | 240 | — | |
| » » » որբանոցի » . . | 40 | — | |
| Քաղաք. վարչութիւնից՝ չքաւորների » . . | 600 | — | |
| Ն. և Ա. Զօրաբեանից՝ Ս. Սանդխ. դպրոցի օգտին | 20 | — | 1989 63 |

10. Պէսպէս հասոյթներից—

| | | | |
|---|---|---|---|
| Անկելանոցի պահեստից հայկական լազարեան վաճառուած 3880 փ. քարածուխի գինը . . | 1008 | 80 | |
| Վարձակալ Տաշչիսից՝ խանութի պատուհանները մեծացնելու ծախսին ի հատուցումն . . | 200 | — | |
| Կիսագին վաճառուած քարածուխից . . . | 452 | 64 | |
| Վարձակալ Գերչելիկչեց՝ փաստաբանին վարձատրելու համար . . . . . . | 15 | — | |
| Քարասուլեանի, Լազարեանի և աղքատաց կալուածների հին շինուածութիւնների վաճառումից . . | 53 | 75 | |
| Քաղաք. հիւանդանոցից՝ Ամիրխանեան հիւանդին ճանապարհ դնելու . . . . . | 15 | — | 1745 19 |

Նոյն 1914 թուին Եկեղեցական Հոգաբարձութիւնս իւր ամեն տեսակ գործառնութիւնների համար ունեցել է

## ԵԼՔ

ութսուն ինը հազար վեց հարիւր տասներկու ռուբլի 23 կոպ. (89612 23), որ գործադրուած է՝

### Ա. ԿՐԹԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

1. Թոշակաւոր սաների պահպանութեան ծախք

| | | |
|---|---|---|
| Ալաջալեան Յովսէփի սաների պահպանութ. . | 136 | 50 |
| Ախչիեան Վարդերեսի » » . . | 1750 | — |
| „Աղքատաց“ դրամագլ. » » . . | 895 | — |
| Բաթրեան Լոյսպարոնի » » . . | 342 | 36 |
| Դիւաչքով Խաչերեսի . » » . . | 3838 | — |
| Զարիֆեան Տ. Խ. ա. քահ. » » . . | 80 | 38 |
| Թուսուզեան Միքայէլի » » . . | 34 | 58 |
| Խազիզեան Յովհաննէսի » » . . | 59 | 15 |
| Խազիզեան Գրիգորի » » . . | 112 | 26 |
| Խալիբեան Լուսիկի » » . . | 980 | — |
| Կարոտեան Գէորգի » » , . | 50 | 05 |
| Մարգասիրական Ընկեր. » » . . | 975 | — |
| Մուրատխանեան Մկրտչի » » - . | 96 | 76 |
| Մուրատխանեան Մարիամի » » . . | 120 | — |

| | | | |
|---|---|---|---|
| Նաթալեան Ստեփանի սաների պահպանութ. | 370 — | | |
| Պօղոս Գասպարի » » | 6640 — | | |
| Բէլլէ-Շահինեան Մինասի » » | 123 76 | 16603 80 | |

2. Նպաստներ ուսման համար՝

| | | | |
|---|---|---|---|
| Չքաւոր երկսեռ ուսանողների ուսման վարձի հատուցման | 1625 — | | |
| Ի յիշատակ Ռոմանովների Տան թագաւորութեան 300-ամեայ յօբելեանի՝ միանուագ ուսմ. վարձ մի ուսանողի | 120 — | | |
| Ամսավճար նպաստներ քաղաքիս ազգային դպրոցներում սովորողներին | 639 — | 2384 — | |

3. Հանրակրթական չքաւոր աշակերտների համար՝

| | | |
|---|---|---|
| Համազգեստ, վերարկու, կօշիկ և կրկնակօշիկ | | 1111 23 |

4. Գիւղական դպրոցի չքաւոր աշակ. համար՝

| | | |
|---|---|---|
| Գիրք, տետրակ և այլն ամենաչքաւոր աշակերտներին | | 46 99 |

5. Նպաստ ծխական դպրոցներին՝

| | | | |
|---|---|---|---|
| Ս. Հռիփսիմեանց օր. ծխ. դպրոցին | | 1200 — | |
| Ս. Սանդխտեան » » » | | 1200 — | |
| Ս. Համբարձման արակ. » » | | 1200 — | |
| Ս. Թորոսի երկսեռ » » | | 1200 — | |
| Ս. Աստուածածնի եկ. Արհեստ. դպրոցին | 1200 — | | |
| Նոյն դպր. աշակերտներին նախաճաշ տալու | 1337 45 | 2537 45 | 7337 45 |

6. Նպաստ նախադպ. և մանկանց խնամ. ընկերութեան՝

| | | |
|---|---|---|
| Մանկապարտէզի պահպանութեան համար | | 300 — |

7. Նպաստ կանանց խնամատար ընկերութեան՝

| | | |
|---|---|---|
| Կարուձևի արհեստանոցում 5 աշակերտուհու պահպանութեան վարձը | | 250 — |
| Կրթական նպաստների համար ընդամենը | | 28,033 47 |

## Բ. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ ԽՆԱՄԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

1. Չքաւորների և հիւանդների պահպանութեան՝

| | | |
|---|---|---|
| Դրամական նպաստ (միանուագ) | 578 11 | |
| » » (ամսավճար և մնայուն) | 2347 50 | |



| | | |
|---|---|---|
| Բաշխուած է թէյ, շաքար, ալիւր և իւղ | 628 59 | |
| » միս և հաց՝ Մ. Իսկիտարեանի հաշւով | 94 15 | |
| Բաժանուած է ձրի և կիսագին քարածուխ | 901 20 | |
| Ծննդեան և Զատկի ճրագալոյցի սեղան՝ հայ զինուորների համար | 171 81 | 4721 36 |

2. Հոգեկան հիւանդների պահպանութեան՝

| | | |
|---|---|---|
| 4 հոգեկան հիւանդ խնամելու վարձ | | 493 — |

3. Անկելանոցի և հիւանդանոցի պահպանութեան՝

| | | | |
|---|---|---|---|
| Ռոճիկ բժշկին | 100 — | | |
| » տնտեսուհուն և ծառայողներին | 1139 40 | | |
| Տօնական ընծայ ծառաներին | 10 — | 1249 40 | |
| Քարածուխ (7000 փ.) | | 1819 — | |
| Հիւանդանոցի շէնքը ընդարձակելու | | 1310 42 | |
| Ծծող հոր փորելու | | 350 — | |
| Անկելանոցի տան նորոգութեան | | 149 46 | |
| » » ապահովագրութեան | | 43 82 | |
| Սննդագին պատսպարուածներին և ծառայողներին | | 5010 04 | |
| Հանդերձագին և կօշկեղէն պատսպարուածն, | | 401 88 | |
| Սարքուկարգի պատկանելիքներ, դեղօրայք, հեռախօսի վարձ, վառելիքին, ննջեցեալներ թաղելու, հորերը պարպելու | | 370 25 | |
| Լուսաւորութեան ծախք | | 85 20 | |
| Երթևեկի և տնտեսական մանր ծախքի | | 310 32 | 11,099 80 |

4. Որբանոցի պահպանութեան՝

| | | | |
|---|---|---|---|
| Ռոճիկ բժշկին | 100 — | | |
| Վարձ ատամնաբոյժին. | 11 — | | |
| Ռոճիկ վերակացուհուն, օգնականին և չորս ծառայի | 1307 66 | | |
| Տօնական ընծայ ծառաներին | 5 40 | 1424 06 | |
| Քարածուխ (2000 փ.) | | 503 — | |
| Լուսաւորութիւն | | 66 33 | |
| Տան նորոգութեան ծախք | | 382 57 | |
| » ապահովագրութիւնը | | 33 49 | |
| Սննդագին | | 2272 18 | |
| Հանդերձագին | | 1012 55 | |
| Գրենական պիտոյք | | 184 49 | |
| Ջուր | | 37 94 | |
| Սարքուկարգ, դեղօրայք, վառելիքին վարձ, սառցատունը լցնելու և այլն | | 98 71 | |
| Երթևեկի և առօրեայ մանր ծախքի | | 135 91 | 6151 23 |

5. Ձեռնակեղենի արհեստանոցի պահպանութեան՝

Ռոճիկ 1-ին ուսուցչուհուն (օգ. 15-ից) 266 66
» 2-րդ » . . 394 57 — 661 23
Վարպետուհի-աշակերտուհիներին՝ %-ական վարձ կարած կարերից . . . . 651 80
Ռոճիկ սպասուհուն և գիշերապահին . . . 246 70
Տօնական ընծայ ծառաներին . . . . 4 50
Աշակերտուհի Գալստեանին՝ Ռոստով երթևեկի ծախք 35 98
Քարածուխ և վառելափայտ (1400 փ.) . . 341 90
Կարի պիտոյքներ և նիւթեր . . . 189 73
Սննդագին . . . . 857 69
Ջուր . . . . . . 6 —
Հորը պարպելու . . . . . . 10 05
Տնտեսական մանր ծախքեր . . . 66 45 — 3072 03

9. Նախիջ. եւ Ռոստ. հայկ. լազարէթի պահպանութեան՝

Նախիջևանի և Ռոստովի հայոց զինուորական լազարէթում 10 մահճակալ պահելու (սեպտեմբերից սկսած) . . . . . . . . 2450 —

7. Զեղչ փոխարինաբար տրուած գումարներից՝

Փոխարինաբար բաշխուած գումարներից զեղչուած է իբրև անյուսալի . . . . . . 244 —

Չքաւորներին խնամատարելու համար ընդամենը 28231 42

## Գ. ԿՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ.

1. Յովհաննէս Պոպովի կտակով՝

Նպաստ Ս. Հռիփսիմեանց դպրոցին . . . 85 50
» Արհեստաւորաց դպրոցին . . . 122 10
» Բարեգործ. Ընկերութեան . . . 142 50 — 350 10

2. Մկրտիչ Մուրադխանեանի կտակով՝

Արհեստ. դպրոցին իբր մրցանակ աւարտող աշակերտի 50 —

3. Գրիգոր Դոլիկեանի կտակով՝

Նպաստ տիկին Տուխէլին . . . . . . . 84 —

4. Գէորգ Կարապետեանի կտակով՝

Նպաստ այրի Կիւլզատէ Կարապետեանին . . . . 360 —



5. Միքայէլ Քարասուլեանի կտակով՝

Վանք Վարագայ վանքի որբանոցին . . 550 —

6. Ռուստամ Բ. Բաշիեանի դրամագլ. հաշուով՝

Ս. Պետրոգրադի հայ ուսանողն. օգտին . . 5 —

7. Դաւիթ Միխիեանի դրամագլ. հաշուով՝

Նպաստ Ս. Համբարձմ. ծխ. դպրոցին . . 11 75

8. Ն. եւ Ա. Զորաբեանի հաշուով՝

Նուէր Ս. Սանդխտեան դպրոցին . . 20 —

Կտակների համաձայն վճարումներ ընդամենը 1430 85

## Դ. ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՔԵՐ.

1. Անշարժ կալուածների պահպանութեան՝

Պետական հարկի հատուցման 3007 88
Քաղաք. գնահատ. տուրքի հատուցման 3566 81
Անշարժ կայքերի ապահովագրութեան 988 67
Ռոստովի տան կոյուղիի վարձ 624 —
» » բահապանի վարձը 238 —
Եկատերինոդարի տան » » 300 — 8725 36

2. Անշարժ կալուածների նորոգութեան՝

Լազարեանի տան նորոգութեան 128 67
Խաթրանեանի տան բակի շինութիւնը ձեռն. արհեստանոցի համար վերաշինելու ծախք . . . 1499 58
Լրացուցիչ վճարումներ Ռոստովի խանութների ընդլայման և նոր ներքնայարկերի շինութեան համար 3243 86
Ռոստովի տան մէկ խանութի պատուհանները իջեցնելու համար . 1000 —
Ռոստովի տան մասնակի նորոգութեան համար . . . . . 1295 63
Քարասուլեանի տան նորոգութեան 633 27
Յ. Պօպովի կրպակների նորոգ. 31 71
» հրդեհուած կրպակի տեղը նոր շինութիւն անելու յատակագիծը պատրաստելու 75 — 106 71

| | | |
|---|---|---|
| «Աղքատաց» կալուածների նորոգութեան | 121 61 | |
| Բելլէ-Շահինեանի գերեզմանի շուրջը երկաթէ պատ անելու . . . . . . . | 95 — | |
| Ախչիեանի տան նորոգութեան . . . | 129 24 | 8253 57 |

3. Յատուկ ընթաց. հաշուի %-ի հատուցման՝

| | | |
|---|---|---|
| Պետական բանկի Ռոստովի գրասենեակին հատուցուած է % . . . . . . | 5158 66 | |
| Պետ. բանկի Ռոստովի գրասենեակին ընթաց. հաշուի պարտքին ի հատուցումն . . . | 2500 — | |
| Ն.-Նախիջ. փ. վ. ընկերութեան հատուցուած է % | 425 18 | 8083 84 |

4. Արժեթղթերի պահպանութեան՝

| | | |
|---|---|---|
| Արժեթղթերի ապահովագրութեան և պահպանութեան | | 281 50 |

5. Դատական, նոտարական եւ ծանուցումների ծախս՝

| | | |
|---|---|---|
| Բրիտանական դեր-հիւպատոսին՝ Բաբաջանեանի կալուածային արդիւնքները ստանալու համար գրուած թղթերի վաւերացման . . . . . . | 33 — | |
| Վարձակալ Գերշելևիչի դէմ յարուցուած դատը վարելու . . . . . . . | 15 — | |
| Վարձատրութիւն էքսպերտներին՝ Գուրենգով-Բօլդենկով վաճառատան դէմ յարուցուած գործին | 67 50 | |
| Ծանուցումների տպագրութեան . . . . | 50 — | 165 50 |

6. Հոգեհանգստեան ծախս՝

| | | |
|---|---|---|
| Քաղաքիս եկեղեցիների մէջ կատարուած հոգեհանգստեան պաշտօնների համար՝ համաձայն կտակուոր աւանդութեանց | | 379 08 |
| Կալուածական եւ վարչական ծախք ընդամենը | | **25888 85** |

### Ե. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԾԱԽՔ.

1. Պաշտօնեաների ռոճիկ՝

| | | |
|---|---|---|
| Քարտուղարին . . . . . . | 1620 — | |
| Հաշուապահին . . . . . . | 1200 — | |
| Ճարտարապետին . . . . . | 200 — | |
| Գրագրին . . . . . . | 420 — | |
| Կալուածների վերակացուին . . . | 480 — | |
| Խորհրդարանի ծառայողին . . . | 420 — | 4340 |



| | | |
|---|---|---|
| Միանուագ վարձատրութիւն պաշտօնեաներին | | 445 — |

2. Դիւանական պիտոյքներ եւ այլ ծախսեր՝

| | | |
|---|---|---|
| Տարեկան հաշիւների, տեղեկագրի, նախահաշուի և այլ թղթերի տպագրութեան, հաշուամատեանների և դիւանական այլ պատկանելիքների . . . . . | 541 90 | |
| Հեռագիրների, նամակատան, թղթակաղապարների առաքման և այլն . . . . | 222 80 | |
| Հեռախօսի վարձ . . . . . . | 105 75 | |
| Տնտեսական մանր պիտոյքներ, պաշտօնական գործերով երթևեկ, երկաթէ պահարանի վարձ քաղաքային բանկին, տպագրիչ մեքենայի նորոգութեան և այլն . | 372 19 | 1242 64 |
| Խորհրդարանի կառավարութեան ծախք ընդամենը | | **6027 64** |

Տարեկան ընդհանուր ծախքի 89,612 23 կոպ. գումարը հանելով եկամուտի 107,623 95 կոպ. համագումարից, առ 1-ն յունուարի 1915 ամի մնում է յաւելեալ 18011 72, որ յարակցուած է՝

| | |
|---|---|
| Սելէջեան որբերի դրամագլխին . . . | 8 69 |
| Մ. Բելլէ-Շահինեանի » . . . . | 402 73 |
| Մ. Քարասուլեանի » . . . . | 4114 99 |
| Ղ. Լազարեանի » . . . . | 4483 66 |
| Տ. Կիւրեղ եպ. Սրապեանի » . . . | 47 40 |
| Վարժապետական ֆոնդին . . . . | 30 94 |
| Լազարեանի կրթական ֆոնդին . . . | 81 33 |
| Մ. Բելլէ-Շահինեանի կալուածքի նորոգ. ֆ. . | 133 56 |
| Բաքալեանի դրամագլխին . . . . | 400 — |
| Յ. Պօպովի » . . . . . | 4538 — |
| Եկ. Հոգաբ. 25-ամեայ յօբելեանը տօնելու համար յատկացուած . . . . | 2820 12 |
| Հոգևորականաց դրամ. հատուցանելի՝ Մուրատխանեանի կտակի համաձայն . . . | 25 — |
| Շարժական կայքի զեղչման դրամագլխին . . | 465 80 |
| Լիֆթի զեղչման դրամագլխին . . . . | 459 50 |
| | **18011 72** |

## Ա. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ ԵՒ ՆՈՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1914 Թ. ՄԷՋ.

1914 թուին Եկ. Հոգաբարձութեան կազմը հետեւեալն էր.

1. Սալթիքեան Անդրէաս, որ ընտրեալ ներկայացուցիչ է Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ եւ վարում է Հոգաբարձութեանս նախագահի պաշտօնը։
2. Բէլլէ-Շահինեան Տ. Գէորգ քահ., որ կարգուած է յանդամութիւն Հոգաբարձութեանս Ս. Առաջնորդի կողմից, վարում է փոխ-նախագահի պաշտօնը եւ անկելանոցի խնամակալութեան անդամ է։
3. Ալլահվերդեան Մանուկ, որ անդամակցում է Հոգաբարձութեանս իբրեւ Ս. Գէորգ եկեղեցւոյ երեսփոխան եւ վարում է գանձապահի պաշտօնը։
4. Բեդելեան Տ. Պօղոս քահ., որ կարգուած է յանդամութիւն Հոգաբարձութեանս Ս. Առաջնորդի կողմից եւ որբանոցի խնամակալութեան անդամ է։
5. Ալախանեան Գէորգ, որ անդամակցում է Հոգաբարձութեանս իբրեւ Ս. Համբարձման եկեղեցւոյ երեսփոխան եւ Նախիջեւանի անշարժ կալուածների խնամակալութեան անդամ է։
6. Դերիջանեան Աբգար, որ ընտրեալ ներկայացուցիչ է Ս. Համբարձման եկեղեցւոյ եւ խորհրդատու է իրաւաբանական խնդիրների։
7. Խոջայեան Կարապետ, որ ընտրեալ ներկայացուցիչ է Ս. Նիկողայոս եկեղեցւոյ եւ անդամակցում է անկելանոցի եւ որբանոցի խնամակալութեանց։
8. Տապօշնիկեան Յովհաննէս, որ անդամակցում է Հոգաբարձութեանս իբրեւ Ս. Նիկողայոս եկեղեցւոյ երեսփոխան եւ Ռոստովի անշարժ կալուածների խնամակալութեան անդամ է։
9. Տապովալեան Մարտիրոս, որ ընտրեալ ներկայացուցիչ է Ս. Թորոս եկեղեցւոյ եւ Ռոստովի անշարժ կալուածների խնամակալութեան անդամ է։
10. Զաթալբաշեան Սերովբէ, որ անդամակցում է Հոգաբարձութեանս իբրեւ Ս. Թորոս եկեղեցւոյ երեսփոխան, անդամ է անկելանոցի խնամակալութեան եւ չքաւորներին խնամարկող յանձնաժողովի։



11. Զայլախեան Յովհաննէս, որ անդամակցում է Հոգաբարձութեանս իբրեւ Ս. Աստուածածնի եկեղեցւոյ երեսփոխան եւ անդամ է Նախիջեւանի անշարժ կալուածների խնամակալութեան։
12. Զուգայեան Աստուածատուր, որ անդամակցում է Հոգաբարձութեանս իբրեւ Ս. Լուսաւորիչ եկ. երեսփոխան, անդամ է ձեռնարկներին արհեստանոցի խնամակալութեան եւ չքաւորներին խնամարկող յանձնաժողովի։
13. Ռեիզեան Գէորգ, որ ընտրեալ ներկայացուցիչ է Ս. Գէորգ եկեղեցւոյ։
14. Քէրէսթէճեան Սարգիս, որ ընտրեալ ներկայացուցիչ է Ս. Աստուածածին եկեղեցւոյ, անդամ է որբանոցի խնամակալութեան եւ չքաւորներին խնամող յանձնաժողովի։

1914 թ. ընթացքում, Եկեղեցական Հոգաբարձութիւնս, խնամակալութիւնների եւ յանձնաժողովների սովորական գումարումներից զատ, ունեցել է հերթական 10 նիստ, որոնք գումարուել են Հոգաբարձութեան դրասենեակում, պ. Անդրէաս Սալթիքեանի նախագահութեամբ։

Վերոյիշեալ 10 նիստերին Եկ. Հոգաբարձութեանս անդամները մասնակցել են՝

| | |
|---|---|
| Սալթիքեան Անդրէաս . . . . . . | 10 անգամ |
| Խոջայեան Կարապետ . . . . . . | 10 » |
| Զաթալբաշեան Սերովբէ . . . . . . | 10 » |
| Բէլլէ-Շահինեան Տ. Գէորգ ք. . . . . . . | 10 » |
| Բեդելեան Տ. Պօղոս ք. . . . . . . | 9 » |
| Ալախանեան Գէորգ . . . . . . | 9 » |
| Քէրէսթէճեան Սարգիս . . . . . . | 8 » |
| Ալլահվերդեան Մանուկ . . . . . . | 8 » |
| Դերիջանեան Աբգար . . . . . . | 6 » |
| Ռեիզեան Գէորգ . . . . . . | 5 » |
| Տապովալեան Մարտիրոս . . . . . . | 4 » |
| Տապօշնիկեան Յովհաննէս . . . . . . | 4 » |
| Զայլախեան Յովհաննէս . . . . . . | 4 » |
| Զուգայեան Աստուածատուր . . . . . . | 3 » |

Եկեղեցական Հոգաբարձութեանս նիստերը, ամսական հաշիւների քննութիւնից զատ, զբաղուել են հետեւեալ խնդիրներով.

ա. Եկ. Հոգաբարձութեան անշարժ կալուածների պահպանութեան, նորոգութեան, վարձու տալու եւ վարձադրամները ժամանակին գանձելու հարցերը։

բ. Ուսման թոշակների եւ միանուագ նպաստների բաշխումը ազգային եւ պետական դպրոցների մէջ սովորողներին։

գ. Դրամական նպաստների բաշխումը եւ չքաւորների խնամարկութեան հարցերը։

դ. Հոգաբարձութեանս աստուածահաճոյ հաստատութիւնների, այսինքն՝ անկելանոցի, պատսպարանի, որբանոցի եւ դպրոց-արհեստանոցի կառավարութիւնը եւ պահպանութիւնը։

## Բ. ԵԿ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ.

Եկեղեցական Հոգաբարձութիւնս անշարժ կալուածներ ունի.

### 1. ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒՄ՝

ա. «Աղքատաց» կոչուած կալուածներ, որ այլ և այլ ժամանակներ բարեսէր անձինք նուիրաբերել են յօգուտ աղքատաց քաղաքիս. այդ կալուածները գտնվում են քաղաքիս Եկատերինեան, կամ Լ. Տօլստոյի և Շուկայի հրապարակներում: «Աղքատաց» կալուածները 1914 թ. մուտք ունեցել են 3586 ռուբլի:

բ. Լազարեան Ղազարոսի երկյարկանի երկու տունը, Լ. Տօլստոյի հրապարակի և 2-րդ Սօբօրնայա փողոցի անկիւնը: Այս տները վարձու տրուած են քաղաքային վարչութեանը և 1914 թ. եկամուտ բերել են 7000 ռ.:

գ. Դօնիկեան Գրիգորի անշարժ կալուածքը, յարակից շինութիւններով, 26-րդ գծի վրայ, № 22, որ 1914 թուին ունեցել է մուտք 700 ռ.:

դ. Խարտալեան Յովհաննէսի երկյարկանի տունը, յարակից շինութիւններով, որ գտնվում է Լ. Տօլստոյի հրապարակի վրայ № 5: Այս տան մէջ զետեղուած է Հոգաբարձութեանս որբանոցը յանուն Մարիամ և Յովհաննէս Խալթրանեանի. այս կալուածքի բացի տունը և մթերանոցը 1914 թուին վերաշինուեցաւ ճերմակեղէն կարելու արհեստանոցի համար, ուր և փոխադրուեցաւ յիշեալ արհեստանոցը:

ե. Սախառեան Յովհաննէսի հողաբաժինը 1-ին Զագօրոդնայա փողոցի վրայ № 18.

զ. Մկրտիչ Մուրասխանեանի հողաբաժինը 40-րդ գծի վրայ № 6.

### 2. ՌՈՍՏՈՎՈՒՄ՝

ա. Գասպար Պօպովի, Մկրտիչ Մուրասխանեանի եւ Մանուկ Բաքաչանեանի չորսյարկանի տունը Բոլշայա Սադովայա կենտրոնական փողոցի վրայ № 84: Այս տնից 1914 թուին եկամուտ ստացուած է 51800 ռուբլի:

բ. Վարդերես Անչիեանի երկու տունը, բացի եռյարկանի շինութիւնով, Դմիտրիեւսկայա փողոցի վրայ № 91 և 93: Այս տները բերել են 7300 ռ. եկամուտ:

### 3. ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐՈՒՄ՝

ա. Քառասունեան Միխայէլի եռյարկանի տունը Կրասնայա փողոցի վրայ № 55: 1914 թուին այս կալուածքից մուտք եղել է 16590 31 կոպ.: Քառասունեանի տան կառավարութիւնը յանձնուած է Եկատերինոդարի վաճառական պ. Լուսեղէն Արզումանեանին:

### 4. ՏԱԳԱՆՐՕԳՈՒՄ՝

ա. Պօպով Յովհաննէսի երկու խանութները, Պետրովսկայա հրապարակի վրայ: 1914 թուին կրպակներից մուտք եղել է միայն 153 33 կոպ., որովհետև 1914 թ. մարտ ամսին մեծ խանութը հրոյ ճարակ եղաւ, իսկ փոքրը տարուայ մեծագոյն մասը



պարապ է մնացած: Յիշեալ կրպակների կառավարութիւնը յանձնուած է Տագանրոգի հայոց եկեղեցւոյ միաբան Տ. Յովհաննէս ք. Օքսենտեանին: Այրուած կրպակը ապահովագրուած էր Տագանրոգի փոխադարձ ապահովագրական ընկերութեան մէջ 5000 ռ. գումարի: Համաձայն նոյն ընկերութեան կազմած հաշուացուցակին Հոգաբարձութիւնս ստացաւ ի հատուցումն հրդեհից գոյացած իւր վնասին 4538 ռուբլի: 1914 թ. մայիսի 10-ին գումարուած նիստում Հոգաբարձութիւնս որոշել էր հրդեհուած կրպակի տեղը նորը կառուցանել, և արդէն պատրաստուած էր շինութեան յատակագիծը, բայց պատերազմի դէպքերի պատճառով բարւոք համարուեցաւ կրպակի կառուցումը յետաձգել:

### 5. ԿԱՄԵՆՍԿԱՅԱ ՍՏԱՆԻՑԱՅՈՒՄ՝

ա. Քեղլ-Ճախրեան Միհասի մէկ խանութը, որ գտնվում է Դօնեցկի պրոսպեկտի վրայ: Հանգուցեալ Քեղլ-Ճախրեանի կտակի համաձայն այս խանութը վարձու տուողը, նորոգութիւններ անողը և վարձերը գանձողը է կտակակատար պ. Համբարձում Չէօրեքչեանը, որ ապրում է նոյն աւանում: Այս խանութից 1914 թ. Հոգաբարձութիւնս մուտք ունեցել է 480 ռուբլի:

### 6. ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԿԱԼԿԱԹԱ ՔԱՂԱՔՈՒՄ՝

ա. Մանուկ Բաքաչանի երկյարկանի տունը, որ գտնվում է Կալկաթայի Չինուբազար կոչուած փողոցի վրայ, հայոց Ս. Նազարէթ եկեղեցւոյ մօտ: Այս կալուածքը կառավարողն է Բենգալիոյ գլխաւոր ադմինիստրատօրը, որից և 1914 թուին Հոգաբարձութիւնս ստացել է Ռուս-Ասիական բանկի միջոցով 3329. 49 կոպ., 1913 թ. յունուարի 1-ից մինչև 1914 թ. յուլիսի 1-ը մեզ հասանելի վարձագրամը:

## Գ. ԵԿ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՍԱՆԵՐՆ ՈՒ ՍԱՆՈՒՀԻՆԵՐԸ.

1914 թ. Եկեղեցական Հոգաբարձութիւնս սաներ և սանուհիներ պահել է պետական և ազգային դպրոցներում հետևեալ բարերարների և վաստակաւորների անուան:

1. Արաչալեան Յովսէփի անուան երկու սան, որոնցից մէկը սովորում է Թեմական դպրանոցում, միւսը Գոգոյեան օր. Գիմնազիայում. սոքա երկուսն էլ երթևեկ են:

2. Ախչիեան Վարդերեսի անուան 5 սան, որոնք սովորում են քաղաքիս Թեմական դպրանոցում. այս հինգն էլ գիշերօթիկ են:

3. Բարթեան Լոյսպարոնի անուան 6 սանուհի, որոնցից 2-ը սովորում են քաղաքիս Թեմական դպրանոցում, 2-ը—Ս. Հռիփսիմեանց օր. դպրոցում և 2-ը Արհեստաւորաց դպրոցում. այս 6 սանն էլ երթևեկ են:

4. Դիւալով Խաչերեսի անուան 11 սան, որոնք սովորում են քաղաքիս Թեմական դպրանոցում և բոլորն էլ գիշերօթիկ են. այս սաների ընտրութիւնը կատարվում է Թեմական դպրանոցի Հոգաբարձութեան ձեռքով:

5 Զարիֆեան Տ. Խաչատուր ա. քահանայի անուան 1 սան, որ սովորում է Թեմ. դպրանոցում և երթևեկ աշակերտ է։

6. Թումաջեան Միքայէլի անուան 1 սան, որ սովորում է Թեմ. դպրանոցում և երթևեկ է։

7. Խազիզեան Յովհաննէսի անուան 2 սանուհի, որոնք սովորում են ս. Սանդխտեան օր. դպրոցում։

8. Խաչիբեան Լուսաբերի անուան 2 սանուհի և 1 սան, որոնցից 1-ը՝ Խազիզեան Եւան, սովորում է Մոսկուայի կանանց բարձրագոյն կուրսերում, 2-րդը՝ Մկրտչեան Մարիամ—Կիևի Ֆրէօբէլեան կուրսերում և 3-րդը քաղաքիս Թեմական դպրանոցում, երբև գիշերօթիկ։

9. Խազիզեան Գրիգորի անուան 2 սան, որոնցից մէկը սովորում է Թեմ. դպրանոցում, միւսը—Գոգոյեան օր. Գիմնազիայում. այս երկուսն էլ երթևեկ են։

10. Կարոյեան Գէորգի անուան 1 սան, որ սովորում է Թեմական դպրանոցում և երթևեկ է։

11. Մարդասիրական Ընկերութեան անուան 4 սան, որոնցից 2-ը սովորում են ս. Էջմիածնի ճեմարանում և 2-ը—Թեմական դպրանոցում։

12. Մուրադխանեան Մկրտիչի եւ Մարիամի անուան 4 սան, որոնցից 2-ը սովորում են ս. Հռիփսիմեանց օր. դպրոցում և 2-ը—Թեմ. դպրանոցում. այս չորսն էլ երթևեկ աշակերտներ են։

13. Նարպէյեան Ստեփանի անուան 1 սան, որ ուսանում է Պետրոգրադի Գիւղատնտեսական դպրոցում։

14. Պօղով Գասպարի անուան 12 սան պետական բարձրագոյն մասնագիտական դպրոցներում, 2 սան քաղաքիս Թեմ. դպրանոցի օթևաններում և 32 սան նոյն Թեմ. դպրանոցում իբրև երթևեկ աշակերտներ, ա. կարգի ուսման թոշակով։

Բարձրագոյն դպրոցների սաներն են.

1. Աօրեան Բաղդասար, Պետրոգրադի Գիւղատնտ. ճեմ. ուսանող
2. Զօրայեան Մարկոս » » » »
3. Ներսէսօղլեան Մելքոն » Հօդէներաղաբան. » »
4. Քէչէկեան Ստեփան » » » »
5. Զարիֆեան Յովհաննէս, Մոսկուայի Տեխնիկական դպրոցի »
6. Պօղով Կարապետ » » "
7. Թոփչեան Վարդան " » » »
8. Խոջայեան Սարգիս » Համալսար. բժշկ. ճիւղի »
9. Ալաջալեան Աղեքսանդր, Խարկովի » իրաւաբ » »
10. Թերզեան Յովհաննէս » » բժշկ. » »



11. Խաճիեան Մինաս, Պետրոգրադի պօլիտեխնիկումի ուսանող
12. Շապշնիկեան Եղիա, Խարկովի Անասնաբուժակ. ճեմ. ուսանող

1914—14 ուսումն. տարուայ վերջին, ուսման լիակատար ընթացքն աւարտեց ինժեների կոչումով Պօղով Կարապետը, իսկ ուսանող Թերզեան Յովհաննէսը՝ տկարութեան պատճառով, ստիպուած եղաւ թողնել իր ուսումնքը. սոցա երկուսի տեղը ընտրուեցան ուսանողներ՝ Թամանեան Միւռոն և Պօղով Եղիա։

15. Տիգրանեան Գէորգ բժշկի անուան 5 սան, որոնցից 3-ը սովորում են ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանում և 2-ը քաղաքիս Թեմական դպրանոցում։ Ճեմարանցիները գիշերօթիկ են, թեմականցիները—երթևեկ։

16. Քելլէ-Ջահիրեան Մինասի անուան 2 սան, որոնք սովորում են քաղաքիս Թեմական դպրանոցում և երթևեկ են։

17. «Աղխատաց» կոչուած դրամագլխի հաշուով 2 սան, որոնցից մէկը սովորում է Ենայի համալսարանում, իսկ միւսը քաղաքիս Թեմական դպրանոցի օթևաններում։ Առաջին թոշակը սահմանուած է Հայկական Տարի և Տիպի յօբելեանների յիշատակին, իսկ երկրորդը—ի յիշատակ Միքայէլ Նալբանդեանի Հնդկաստան ուղևորութեան և Մասեհ Բաբաջանի կտակի խնդիրը կարգաւորելուն։

## Դ. ՈՒՍՄԱՆ ՄԻԱՆՈՒԱԳ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ.

1914 թուին ուսման միանուագ նպաստի համար խնդիր տուած էին 51 հոգի, որոնցից 26 հոգին յունուարի և 25 հոգին օգոստոսի մէջ, այս խնդրատուներից բաւարարութիւն տրուած է 40 հոգու։

### Ուսման միանուագ նպաստ ստացողների ցուցակը.

| №№ | Անուն և ազգանուն | Ա. կիսամ. | Բ. կիսամ. | Ամբողջ տարին |
|---|---|---|---|---|
| 1 | Ախոզամանեան Հեղինէ . . . . . | 50 | 50 | 100 |
| 2 | Ասլանեան Պետրոս . . . . . | — | 50 | 50 |
| 3 | Բայբուրդեան Մագդաղինէ . . . | 50 | — | 50 |
| 4 | Բաշինջաղեան Ստեփաննոս . . . | — | 50 | 50 |
| 5 | Գասպարեան Եւգինէ . . . . | 50 | — | 50 |
| 6 | Ներսէսօղլեան Ինգոս . . . . . | 25 | — | 25 |
| 7 | Լեզգինցեան Նիկողայոս . . . . | 50 | 50 | 100 |
| 8 | Լուսեղէնեան Տիգրան . . . . | 50 | 50 | 100 |
| 9 | Խաբուլաղյեան Աննա . . . . . | — | 50 | 50 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10 | Խորոզեան Իսկուհի . . . . . . | 50 | — | 50 |
| 11 | Ճլաուխեան Գաբրիէլ . . . . . | 50 | 50 | 100 |
| 12 | Մարտիրոսեան Նիկողայոս . . . . | — | 50 | 50 |
| 13 | Մոմճեան Խաչատուր . . . . . | 25 | 50 | 75 |
| 14 | Յարութիւնեան Գայեանէ . . . . | 25 | 50 | 75 |
| 15 | Չախալեան Վարվառէ . . . . . | — | 50 | 50 |
| 16 | Ջաւտարեան Նեկտարինէ . . . . | 25 | — | 25 |
| 17 | Պօպով Դաւիթ . . . . . . | 50 | 25 | 75 |
| 18 | Պօպովեան Նունէ . . . . . | — | 75 | 75 |
| 19 | Պօպով Անդրանիկոս . . . . . | 50 | 50 | 100 |
| 20 | Սերեբրակեան Թագուհի . . . . | 50 | 50 | 100 |
| 21 | Վարդանեան Կարապետ . . . . | — | 50 | 50 |
| 22 | Տէր-Թադէոսեան Կարապետ . . . | 25 | — | 25 |
| 23 | Տէր-Գրիգորեան Սրբուհի . . . . | 50 | — | 50 |
| 24 | Տէր-Գրիգորեան Աննա . . . . . | 50 | 50 | 100 |
| 25 | Քեչէկէզեան Վարվառէ . . . . | 50 | — | 50 |
| | | 775 | 850 | 1625 |

Բացի վերոյիշեալներից, ուսման միանուագ նպաստ տրուած է նաև քաղաքիս դպրոցներում սովորողներին, ամսավճար հատուցումներով, 639 ռուբլի. իսկ ամենաչքաւորներին բաշխուած է նաև գրենական պիտոյք 46. 99 կոպէկի։

## Ե. ՀԱՆԴԵՐՁԵՂԷՆԻ ԵՒ ԿՕՇԿԵՂԷՆԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՉՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ.

1914 թուին քաղաքիս ազգային դպրոցներում սովորող աշակերտ-աշակերտուհիներին մատակարարուած է 1111 25 կոպէկի հագուստ և կօշկեղէն, այն է՝

| | |
|---|---|
| 96 զոյգ կօշիկ . . . . | 358 37 |
| 96 զոյգ կրկնակօշիկ . . . | 212 88 |
| Դպրանոցի աշակերտներին զգեստ կտորներ և կարելչէք . . | 210 23 |
| Ծխական դպրոցների աշակերտ-աշակերտուհիներին ձմեռուայ վերարկու | 329 75 |

Հոգաբարձութիւնից հագուստ և կօշկեղէն ստացող երկսեռ սաների թիւը 1911 թ. եղած է 103 հոգի, որոնցից՝

20 հոգին սովորում են Ս. Հռիփսիմեանց դպրոցում. սոցանից 11-ը ստացել են ձմեռուայ վերարկու, իսկ 20-ը—կօշիկ և կրկնակօշիկ։



20 հոգին սովորում են ս. Սանդխտեան դպրոցում. սոցանից 15 հոգին ստացել են ձմեռուայ վերարկու, իսկ 10-ը—կօշիկ և կրկնակօշիկ։

16 հոգին սովորում են ս. Համբարձման եկեղեցւոյ տղայոց դպրոցում. սոցանից 10 հոգին ստացել են ձմեռուայ վերարկու, իսկ 16-ը—կօշիկ և կրկնակօշիկ։

20 հոգին սովորում են ս. Թորոս եկեղեցւոյ երկսեռ դպրոցում. սոցանից 15 հոգին ստացել են ձմեռուայ վերարկու, իսկ 20 հոգին—կօշիկ և կրկնակօշիկ։

19 հոգին սովորում են Թեմ. հոգևոր դպրանոցում. սոցանից 13 հոգին ստացել են վերարկու, 19 հոգին—բլուզ և վարտիք, 15-ը—կօշիկ և կրկնակօշիկ։

7 հոգին սովորում են ս. Խաչի ագարակի խաղախային տարրական դպրոցում. սոցանից 2-ը ստացել են ձմեռուայ վերարկու, 5-ը—կօշիկ և կրկնակօշիկ։

## Զ. ՉՔԱՒՈՐՆԵՐԻ ԽՆԱՄԱՐԿՈՒԹԻՒՆԸ.

Տարուայ մէջ չքաւորներին ի նպաստ բաշխուած նպաստներն ըստ տեսակի են.

ա. Մնայուն նպաստ դրամով (ամսական վճարումներով).
բ. Միանուագ » »
գ. Մնայուն և միանուագ նպաստ մթերքներով և քարածուխով.
դ. Փոխարինաբար տրուած դրամական նպաստներ.

Ա. Ամսավճար դրամական նպաստ ստացել են 1914 թուին՝ ա. 32 հոգի այրի կանայք և 10 հոգի աշխատանքի անընդունակ տղամարդիկ, յատկապէս բնակարանի վարձ հատուցանելու համար. այս 42 հոգին տարուայ ընթացքում ստացել են 2035 50 կոպ., որ մարդագլուխ միջին թուով անում է 4. 10 կ. ամսական. բ. 4 հատ որբ աղջիկներ, որոնք տրուած են պահպանութեան մասնաւոր տներ՝ որբանոցի մէջ ազատ տեղ չլինելուն պատճառով. այս չորս որբուհիների պահպանութեան ծախք եղած է 412 ռուբ.։

Բ. Միանուագ դրամական նպաստ ստացել են 1914 թուին՝

| | | | |
|---|---|---|---|
| 5 | հոգի թաղման համար . . | 21 — | |
| 33 | » ճամբու ծախք . . . | 251 — | |
| 20 | » ապրուստի համար . . | 80 30 | |
| 9 | » բժշկութեան համար . . | 81 — | |
| 1 | » պարտքի հատուցման . . | 17 41 | |
| 6 | » մանրավաճառութիւն անելու | 26 25 | |
| 5 | » զգեստի համար . . . | 29 60 | |
| 1 | » գործիքներ գնելու . . | 10 — | |
| 1 | » արտասահմանի անցագիր հանելու | 10 — | |
| 1 | » ձի գնելու . . . . . | 31 — | |
| | յօգուտ բելգիացիների . . . | 20 — | 578 11 |

Գ. Մթերքներով նպաստ ստացած են ընտանիքով ծանրաբեռնուած այրիներ և աշխատանքի անընդունակ ծերեր ու պառաւներ։ Մթերքներով նպաստ տալու համար ծախսուած է 628 59 կոպ., այսինքն՝

| | | |
|---|---|---|
| 183 փութ 15 ֆ. ալիւր | . . | 270 56 |
| 18 փութ 36 ֆ. իւղ | . . . | 166 32 |
| 1 փութ 38½ ֆ. թէյ . | . . | 102 48 |
| 16 փութ 17 ֆ. շաքար | . . | 89 23 |

Անցած տարիների օրինակով, Ծննդեան եւ Զատկի ճրագալոյցին, խրախճան սեղան պատրաստուած էր Հոգաբարձութեանս հաշուով, Թեմ. դպրանոցի սեղանատանը, 160—170-ի չափ տեղումս ծառայող հայ զինուորների համար։ Այս նպատակով ծախք եղած է 171 81 կոպ.։

Այլ և պ. Մարկոս Խալիստարեանից Հոգաբարձութիւնս 1914 թուին ստացել էր Ծննդեան և Զատկի տօների համար 50-ական ռուբլի՝ քաղաքիս ամենաչքաւոր ընտանիքներին հաց, միս, ձու բաժանելու համար։

Նախկին տարիների պէս, 1914 թուին ևս չքաւոր ընտանիքներին բաժանուած է քարածուխ, որի մի մասը կիսագին, միւս մասը—ձրիապէս։

Կիսագին քարածուխ ստացել են՝

| | | | |
|---|---|---|---|
| Յունուարի | մէջ—27 հոգի | . . . | 20-ական փութ |
| | 35 » | . . . . | 10 » » |
| | 1 » | . . . . | 2 » » |
| Նոյեմբ. և դեկտ. | մէջ 47 » | . . . . | 20 » » |
| | 85 » | . . . . | 15 » » |
| | 66 » | . . . . | 10 » » |
| | 3 » | . . . . | 5 » » |

Այսպէս, ուրեմն, յունուար ամսի ընթացքում 63 ընտանիքի տրուած է 892 փ. քարածուխ, որից ստացուել է 107 04 կ. (12 կ. փութը), իսկ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում—201 ընտանիքի՝ 2880 փութ, որից գոյացել է 345. 60 կ. 12 կ. փութը)։ Հետևաբար 1914 թուին կիսագին քարածուխ վաճառուած է ընդամենը 3772 փութ, որից գոյացել է 452. 64 կ.։ Կիսագին քարածուխ բաժանելու համար Հոգաբարձութիւնս գնել էր 3920 փ. քարածուխ, որ նստել էր իրեն 901. 20 կ.։ Վաճառելու համար գնուած ածուխի 148 փ. մնացորդը յատկացուած էր գաղթական և փախստական հայերի օգտին։

Ձրիապէս քարածուխ ստացել են՝

| | | |
|---|---|---|
| 1 ընտանիք | . . . . | 20 փութ. |
| 74 » | . . . . | 10 » |
| 4 ընտանիք | . . . . | 15 ական փութ. |

Ձրիապէս բաշխուած քարածուխը (մի հազար փութ) ստացուած է հանգուցեալ



Գասպար Կարապետօղլուեանի կտակի համաձայն՝ նորա ժառանգներից։ Սոյն այս քարածուխից 180 փ. տուած է հայ փախստականներին։

Դ. Փոխարինաբար դրամական նպաստ ստացել են 1914 թուին 16 հոգի, 446. 55 կ. գումարի։ Առ 1-ն յունուարի 1914 ամի փոխարինաբար տրուած նպաստների ընդհանուր գումարն էր 3577. 20 կ.։ Նոյն թուին նախկին տարիներում փոխ ստացողները վերադարձրել են 389 ռ., այլ և 244 ռ. զեղչուած է ներկայ տարուայ եկամուտից մեռածների պարտքը, որով առ 1-ն յունուարի 1915 ամի այս հաշուով ստանալիք ցոյց տրուած է հաշուակշռի մէջ 3391. 05 կոպ.։

Ե. Հոգեկան հիւանդներին նպաստ տրուած է 1914 թուին 493 ռ. գումարի. սոքա խնամվում են մասնաւոր տներում, կամ իրենց ազգականների մօտ։

Զ. Նոր-Նախիջեւանի վաճառական պ. Վարդերես Մարկոսեան Տէր-Գրիգորեանցը, նախկին տարիների իւր սովորութեամբ, 1914 թուին ևս ուղարկած էր Հոգաբարձութեանս իւր խանութից 70 զոյգ փոքր և մեծ չափի ոտնամաններ՝ Զատկին առաջ չքաւոր ազգայնոց բաժանելու համար, որ և բաշխուած է 42 ընտանիքի աւագ շաբաթի չորեքշաբթի օրը։

## Է. ԵԿԵՂ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1913 Թ.

### Ա. Անկելանոց, պատսպարանի եւ հիւանդանոցի բաժիններով.

Եկեղեց. Հոգաբարձութեանս անկելանոցը, իւր յարակից բաժիններով, գտնվում է Հանգստարանի Ս. Յովհաննու Կարապետի եկեղեցու գաւթում, սեփական տների մէջ, որոնցից մեծում զետեղուած է բուն անկելանոցը. իսկ փոքրում—պատսպարանը (արտօնեալ չքաւորների համար) և հիւանդանոցի բաժինը (միայն ախտաւորների համար)։

Առ 1-ն Յունուարի 1914 ամի վերոյիշեալ յարկաբաժիններում պատսպարուողների ընդհանուր թիւն էր 86 հոգի, որոնցից 59-ը՝ կինմարդ և 27-ը՝ այրմարդ. 12 հոգի էլ ծառայողներ։ Տարուայ ընթացքում մեռել են 4 այր մարդ և 5 կինմարդ. յօժար կամքով դուրս են եկած 10 այր և 11 կին։ Տարուայ ընթացքում նոր ընդունուել են՝ 9-ը այր մարդ և 7-ը կինմարդ, որով առ 1-ն յունուարի 1915 ամի յիշեալ աստուածահաճոյ հաստատութիւնների մէջ պատսպարուած են 72 հոգի, որոնցից 50 հոգին՝ կինմարդ և 22 հոգին այրմարդ։ Կանանցից 37 հոգին անկելանոցումն են, 12 հիւանդանոցում և 1-ը պատսպարանում. այրերից 12-ը անկելանոցումն են, 7-ը հիւանդանոցում և 3-ը պատսպարանում։

Այս հաստատութիւնների մերձաւոր հսկողութիւնը և կառավարութիւնը յանձնուած է Հոգաբարձութեանս անդամներից Տ. Գէորգ ք. Քելլէ-Շահինեանին, պ. Խոջայեան Կարապետին և Զաթլաբաշեան Սերովբէին։ Պատսպարուածներին բժշկական դարման հասցնելու համար հրաւիրուած է բժ. Ղ. Ղարիբեանը։

Անկելանոցի, պատսպարանի և հիւանդանոցի պահպանութեան համար 1914 թ. յատկացուած են եղել հետևեալ հասոյթները, որոնց համագումարն է 11099. 80 կ, այսինքն՝

| | | |
|---|---|---|
| Մասեհ Բաբաջանի դրամագլխի հասոյթներից | 8795 19 | |
| Գրիգոր Դոնիկեանի » » | 562 13 | |
| Մկրտիչ Մուրատխանեանի » » | 280 — | |
| Յովհաննէս Պօղովեանի » » | 171 — | |
| Նիկողայոս Սարիեանի » » | 41 68 | |
| Յատուկ նուիրատուութիւններ | 225 — | |
| Վաճառուած 3880 փ. քարածուխի գումարը | 1008 80 | |
| Սառցատան վարձը . . . . . | 15 — | |

Վերոյիշեալ 11099 80 կ. գումարը ծախսուած է այսպէս՝

| | | |
|---|---|---|
| Ռոճիկ բժշկին . . . . . | 100 — | |
| » տնտես վերակացուհուն . . . . | 360 — | |
| » 7 ծառայի . . . . . | 779 40 | |
| Նուէր ծառաներին . . . . | 10 — | 1249 40 |
| Անկելանոցի տան ապահովագր. . . . | | 43 83 |
| Քարածուխ (7000 փ.) . . . . | | 1819 — |
| Հիւանդանոցի շէնքը ընդարձակելու . . | 1310 42 | |
| Անկելանոցի տունը նորոգելու . . . | 149 46 | |
| Ծծող հորեր փորելու . . . . | 350 — | 1809 88 |
| Լուսաւորութեան ծախք . . . . | | 85 20 |
| Հանդերձեղէն . . . . . | 293 38 | |
| Ոտնաման . . . . . . | 108 50 | 401 88 |
| Սննդեղէն՝ միս . . . . . | 1808 15 | |
| հաց . . . . . | 1289 57 | |
| Նպարեղէն, ընդեղէն և այլն . . . | 820 58 | |
| Այլ և այլ սննդեղէն . . . . | 575 55 | |
| Հոգենաց . . . . . . | 130 77 | 4619 62 |
| Հիւանդանոցի բաժնի համար (3 ամս.) | | |
| միս . . . . . | 109 12 | |
| հաց . . . . . | 123 60 | |
| նպարեղէն և այլն . . . | 136 04 | |
| զանազան . . . . | 21 66 | 390 42 |
| Տնտեսական ծախք՝ սարք ու կարգի նիւթեր և առարկաներ, դեղեր, հեռախօսի վարձ, ննջեցեալներ թաղելու, վարսաւիրին վարձ . . . . . | | 370 25 |
| Առօրեայ մանր ծախք . . . . | | 310 32 |

Այստեղ Հոգաբարձութիւնս աւելորդ չէ համարում յայտնելու, որ 1914 թ. օգոստոսի 9-ին գումարուած յատուկ նիստում, ուշադրութեան առնելով այն բացառական վիճակը, որում գտնվում է մեծածաւալ Ռուսաստանը՝ դժնդակ պատերազմի պատճառով. այլ և ի նկատի ունենալով, որ քաղաքիս հայ հասարակութիւնը որոշել է կազմակերպել և բանալ յատուկ հիւանդանոց. յիսուն կամ աւելի մահճակալով՝ պատերազմի դաշտում վիրաւորուած կամ հիւանդացած զօրականների համար, Հոգաբարձութիւնս էլ անհրաժեշտ համարելով վայելուչ մասնակցութիւն ունենալ հայկական հիւանդանոցի բացման և կազմակերպութեան գործում, որոշեց.



ա. Հոգաբարձութեանս անկելանոցի ընդարձակ շինութիւնը ձրիաբար յատկացնել ի զետեղումն հայկական հիւանդանոցին.

բ. Նոյն հիւանդանոցի մէջ Հոգաբարձութեանս անունով և հաշուով պահել մինչև 10 մահճակալ, յատկացնելով այդ բանի համար հարկաւորուած դրամը ծախսել ընթացիկ մուտքերից.

գ. Անկելանոցի մէջ պատսպարուածներին տեղափոխել ս. Համբարձման դպրոցի շինութիւնը։

Բ. Որբանոց

Եկեղեց. Հոգաբարձութեանս որբանոցը գտնվում է սեփական երկյարկանի տան մէջ, որ նուիրաբերել է մեր պատուարժան քաղաքացի պ. Յովհաննէս Գէորգեան Խաթրանեանը։

Առ 1-ն յունուարի 1914 ամի որբանոցում խնամվում էին 30 հոգի, որոնցից 18-ը աղջիկ և 12-ը մանչ։ Աղջիկներից խպառ որբ են միայն 5 հոգի, իսկ մանչերից— 1-ը. Մնացածներից 14 հոգին անհայր են, 9 հոգին—անմայր, և 1-ը ունի ծնողներ, բայց ընդունուած է իբրև բացառութիւն, պ. Խաթրանեանի յատուկ խնդրով։

18 աղջիկներից 5 հոգին սովորում են ս. Սանդխտեան դպրոցում, 4-ը ս. Հռիփսիմեանց դպրոցում, 1-ը Գոգոյեան գիմնազիայում, 3-ը ձեռմակեղէնի դպրոց-արհեստանոցում, իսկ մնացած 5 հոգին, իբրև փոքրահասակներ, պարապում են որբանոցում յատուկ վարժուհու հսկողութեան ներքոյ։

12 տղաներից 8 հոգին սովորում են Թեմական դպրանոցում, մէկն էլ—Արհեստաւորաց դպրոցում. Մնացեալները պարապում են որբանոցում։

Որբանոցի մերձաւոր կառավարութիւնը յանձնուած էր 1914 թուին ևս Հոգաբարձութեանս անդամներից բար. Տ. Պօղոս ք. Բեղլեանին, Խոջայեան պ. Կարապետին և Քէրէսթէճեան պ. Սարգսին։

1914 թ. որբանոցի պահպանութեան համար գործադրուած է 6151 23 կ., այն է,

| | |
|---|---|
| Մասեհ Բաբաջանեանի դրամ. հասոյթներից | 4666 28 |
| «Աղքատաց» » » | 1394 95 |
| Յ. Խաթրանեան » » | 50 — |
| Յատուկ նուիրատուութիւններ . . . | 40 — |

1914 թուին որբանոցը ծախք ունեցել է՝

| | | |
|---|---|---|
| Ռոճիկ բժշկին . . . | 100 — | |
| » վերակացուհուն . . | 480 — | |
| Ռոճիկ վերակացուհու օգնականին (4 ամս. 20 օր.) . . | 141 66 | |
| » կար անող օրիորդին . | 180 — | |
| » վարժուհուն (4 ամս.) | 60 — | |
| » ծառաներին . . . | 451 40 | |
| Վարձ ատամնաբուժին . . | 11 — | 1424 06 |

| | | |
|---|---|---|
| Տան ապահովագրութեան . | | 33 49 |
| Տան նորոգութեան . . . | | 382 57 |
| Քարածուխ (2000 փ.) . . | | 503 — |
| Լուսաւորութիւն . . | | 66 33 |
| Հանդերձեղէն՝ զգեստ . . | 411 55 | |
| ոտնաման (1½ տար.) | 514 55 | 926 10 |
| Սննդեղէն՝ միս . . . | 545 27 | |
| հաց . . . | 521 03 | |
| նպարեղէն, ընդեղէն, կանաչեղէն . | 456 71 | |
| այլ և այլ . . | 435 77 | |
| կաթ . . . | 313 40 | 2272 18 |
| Գրենական պիտոյք . . . | | 184 49 |
| Դեղեր . . . . . | | 17 65 |
| Խոհանոցի, սեղանատան և ննջարանի իրեր | | 127 51 |
| Վարսաւիրին . . . . | | 10 — |
| Ջուր և սառոյց . . . | | 67 94 |
| Առօրեայ տնտեսական մանր ծախք . . | | 135 91 |

Գ. Ճերմակեղէնի դպրոց-արհեստանոց՝

1914 թուի սկզբին արհեստանոցիս աշակերտուհիների ընդհանուր թիւն է 26, որոնցից 6 հոգին, պէսպէս պատճառներով, թողին արհեստանոցը։ Տարուայ մէջ նոր աշակերտուհիներ ընդունուած են 10 հոգի, 7 հոգին անցան բուն արհեստանոցը, որով աշակերտուհիների թիւը դասարաններում հասաւ 23-ի։

Արհեստանոցի մէջ տարուայ սկզբում կային 6 վարպետուհի և 2 օգնականուհի. ճերմակեղէն կարելու բաժնից անցան 7 հոգի, նոր ընդունուեցաւ 1-ը, իսկ 5 հոգին զանազան պատճառներով ելան արհեստանոցից, որով վարպետուհիների և օգնականների ընդհանուր թիւն հասաւ 11-ի։ Սոցանից 1-ը ստանում է իւր արտադրած կարի արժէքի 80-%-ը, 9-ը հոգին—60%-ը, իսկ 1-ը ստանում է ամսավարձ երեք ռուբլի։ Ճերմակեղէն կարելու բաժնի մէջ հմտանալու համար մնացող 4 աշակերտուհիները նոյնպէս ստանում են իրենց արտադրած կարի արժէքի 60%-ը։

Դպրոց—արհեստանոցի 34 աշակերտուհիները, ըստ դասընթացքի, տեղաւորուած էին՝

| | | |
|---|---|---|
| Ա. դասընթացքում . . . . | 7 | աշակ. |
| Բ. » . . . | 9 | » |
| Գ. » . . . | 3 | » |
| Հմտանալու մնացած են . . . | 4 | » |
| Արհեստանոցում աշխատում են . | 11 | » |

Բուն արհեստանոցը ունի մէկ գլխաւոր վարպետուհի, որի հսկողութեան տակ կարւում են յատկապէս կանացի նուրբ բլուզներ։ Այս վարպետուհին ստացել է 394 ր. 57 կ. վարձ։ Դասարանցիները ունին ճերմակեղէնի մասնագէտ ուսուցչուհի, որ պա-



րապել է կէս տարի միայն և ստացել է 266. 66 կ. ռոճիկ։ Դասարանի ուսուցչուհու պաշտօնը 4 ամսի չափ վարել է արհեստանոցի գլխաւոր վարպետուհին, օգնականութեամբ 2 վարպետուհիների։

Տարուայ ընթացքում դպրոց-արհեստանոցս արտադրել է 466 կտոր ճերմակեղէն և 311 հատ կանացի բլուզ։ Սորանից զատ զինուորների համար ևս ձրիապէս կարուած է 458 կտոր ճերմակեղէն։

Արհեստանոցի մերձաւոր կառավարութիւնը յանձնուած է Հոգաբարձութեանս անդամ պ. Ա. Զուգայեանին, որին աջակցում են մի խումբ տիկիններ և օրիորդներ, որոնք հիմնադիրն են եղած սոյն արհեստանոցիս և ապա յանձնել են Հոգաբարձութեանս տեսչութեանը։

1914 թ. Արհեստանոցի պահպանութեան համար ծախսուած է 3072. 03 կոպ., այն է՝

| | | |
|---|---|---|
| Ռոճիկ ուսուցչուհուն (կէս տար.) . | 266 66 | |
| » գլխաւոր վարպետուհուն . | 394 57 | |
| Վարձատրութիւն օգնականուհիներին | 30 — | |
| %-ական վարձ վարպետուհի-աշակերտուհիներին (կարած կարերից) . | 621 80 | |
| Գալստեան աշակերտուհուն . . | 35 98 | |
| Ռոճիկ սպասուհուն, գիշերապահին և տօնական նուէր . . . | 251 20 | 1600 21 |
| Քարածուխ (1400 փ.) . . . | | 341 90 |
| Կարի պիտոյքներ և նիւթեր . . | | 189 73 |
| Սննդեղէն՝ միս . . . | 267 02 | |
| հաց . . . | 143 75 | |
| նպարեղէն . . . | 223 19 | |
| այլ և այլ . . . | 193 73 | |
| ծառաներին սննդեղէն . | 30 — | 857 69 |
| Նախկին բնակարանի հորը մաքրելու և Ջրի . . . . | | 16 05 |
| Առօրեայ տնտես մանր ծախք | | 66 45 |

Նոյն 1914 թ. Արհեստանոցը մուտք ունեցել է՝

| | | |
|---|---|---|
| կարուած կարերից . . | 905 10 | |
| նուէրներից . . | 219 — | |
| «Աղքատաց» դրամ. հասոյթներից . | 1947 93 | 3072 03 |

## Ը. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՕԳՏԻՆ ՆՈՐ ՆՈՒԻՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ 1914 ԹՈՒԻՆ.

Ա. Գր. Խազիզեանի կտակը.

Գրիգոր Աստուածատրեան Խազիզեանի կտակաւոր աւանդութեան 4-րդ յօդուածով, նորա կին՝ Մարիամ Անանիկեանը՝ ամուսնու մահից յետոյ վեց ամսուայ ընթաց-

քում՝ պէտք է յանձնէր Եկեղեցական Հոգաբարձութեանս հինգ հազար ռուբլի դրամ (5000 ռ.), որպիսի գումարը Հոգաբարձութիւնս պիտի թողնէ անձեռնմխելի. իսկ տարեկան տոկոսները գործադրէ հանգուցեալի անուան երկսեռ սաների դաստիարակութեան այն դպրոցական հաստատութիւնների մէջ, որոնք Հոգաբարձութեան համար յարմար կը դատուին։

1914 թ. յունուարի 18-ին, ի կատարումն յիշեալ կտակաւոր աւանդութեան, հանգուցեալ Գրիգոր Խազիզեանի այրին, իւր եղբօր՝ Սիմէօն Անանիկեան Աշակովսկիի՝ ձեռքով, յանձնեց Հոգաբարձութեանս կտակաւանդ հինգ հազար ռուբլին՝ կտակագրի 4-րդ կէտի համաձայն գործադրելու համար։

Բ. Մըսըրեանց Մարգար եւ Միխայէլ եղբայրների նուէրները.

Նոր-Նախիջեանի մեշչանիներ՝ Մըսըրեանց Մարգար և Միքայէլ եղբայրները՝ 1914 թ. մայիսի 27-ին մատուցին Եկ. Հոգաբարձութեանս հինգ հարիւր (500 ռ.) ռուբ. դրամ հետևեալ յայտարարութեամբ. «Կամենալով յաւերժացնել մեր հանգուցեալ եղբօր Դաւիթ Մըսըրեանի յիշատակը, մենք՝ ներքոյ ստորագրեալներս, կը յանձնենք պատուարժան Հոգաբարձութեանդ առձեռն դրամով հինգ հարիւր ռ.։ Յիշեալ այս աւանդը կը խնդրենք պահել անձեռնմխելի յաւիտեանս ժամանակով, իսկ տարեկան տոկոսները յատկացնել Նոր-Նախիջևանի Ս. Համբարձման եկեղեցւոյ հայոց ծխական դպրոցին ի նպաստ, մինչև որ յիշեալ դպրոցն ենթարկուած կը լինի հայոց հոգևոր իշխանութեան տեսչութեանը. հակառակ պարագային կը խնդրենք, որ մեր աւանդած դրամագլխի տարեկան տոկոսները Եկեղեց. Հոգաբարձութիւնդ գործադրէ ըստ իւր հայեցողութեան ի պէտս ուսումնածարաւ հայ մանուկների՝ յանուն մեր հանգուցեալ եղբայր Դաւիթ Մըսըրեանի»։

Եկեղեց. Հոգաբարձութիւնս, ընդունելով յիշեալ նուէրը իւր տեսչութեան ներքոյ, կարգաւորեց դրամագլխի տարեկան տոկոսները յանձնել Ս. Համբարձման ծխական դպրոցի Հոգաբարձութեան։

## Թ. ՀԱՆԳ. ՍԱՐԳԻՍ ԽԱՃԻԵԱՆԻ ԿՏԱԿԱՒԱՆԴ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

1913 թ. նոյեմբերի 1-ին, թիւ 1716 գրութեամբ, Հայրապետական Դիւանը, խնդրած էր, որ Հոգաբարձութիւնս քննէ պ.պ. կտակակատարների հաշիւները և քննութեան արդիւնքը զեկուցանէ Վեհափառ Հայրապետին ի տնօրէնութիւն։ Սոյն գրութեան հետ ուղարկուած էր Հոգաբարձութեանս Վեհափառ Հայրապետի յանուն հանգ. Սարգիս Խաճիեանի կտակակատարների արձակած սրբատառ կոնդակի պատճէնը, որ է՝

«Գէորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի Մեծարգոյ պ.պ. կտակակատարաց բարեյիշատակ Սարգսի Կարապետեան Խաճիեան Նորոյ Նախիջևանցի հարազատ որդւոց Մայր Աթոռոյս ողջոյն և օրհնութիւն Հայրապետական։



Ընկալաք յայտարարութիւն ի ձէնջ, որ 30 յունուարի տարւոյս ընդ հաշուոց 1907, 1908, 1909, 1910, 1911 և 1912 ամաց կտակեալ կարողութեան բարեյիշատակ Սարգսի Կարապետեան Խաճիեանի և իրազեկ եղաք զի նախ՝ կտակարար Սարգիս Խաճեան վախճանեալ է յամսեան փետրուարի 1907 ամի և կտակն նորա հաստատեալ է ի Շրջանային Դատարանի Տագանրօգի ի 14 Յունիսի 1907 ամի, իսկ վերջնականապէս, յետ մասնակի գանգատի, ի 29 յունուարի 1908 ամի. երկրորդ՝ մեծարգոյ կտակակատարքդ հանգուցեալ Սարգսի Խաճիեան, որպէս երևի ի յայտարարութենէ ձերմէ և ի հաշուոց, սկսեալ էք ի յայտ բերել զշարժական և զանշարժ ստացուածս և զհաշիւս ի վերջին հաստատմանէ կտակին՝ ի 1908 ամէ, և առ մինն յունուարի 1913 ամի կարողութիւնն կտակողին ըստ այսմ է՝ 1) յերկուս դրամատունս ընթացիկ հաշուով 38117 88 կոպ., 2) ևս ի դրամատունս գումար 19000 ռուբ. 3) ի Գր. Բախչիսարայցեանէ տոկոսիք 4160 ռ. 4) տոկոսաբեր տոմսք ի գին 55,739. 47 կ., 5) պահանջ յերկուց անձանց 540 ռ., ընդամենն 117,557. 35 կ., և երրորդ՝ որպէս երևի ի յայտարարութենէդ, յընթացս ամաց, համաձայն կտակի, աշխատեալ էք վասն իրագործման ցանկութեան հանգուցելոյն, որ յիշատակեալ կայ ի չորրորդ յօդուածի կտակին, սակայն ի պատճառս այլ և այլ հանգամանաց չէ յաջողեալ Ձեզ։

